ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 596-598, քարտուղարություն, հեռ. 596-125

N 1/112 «17» 03 2016 թ.

Ձեր

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
նախագահ՝ Լ.Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված Ձեր 23.02.2016թ-ի թիվ 269-ի 5 և ի լրումն ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի 29.02.2016թ-ի թիվ 1/82 գրությունների.

2016թ-ի հունվարի 1-ից մինչև փետրվարի 23-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանությունում էլեկտրոնային եղանակով ստացվել է թվով 98 տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցում, որոնց տրվել է 95 գրավոր և 2 բանավոր պատասխան, իսկ մեկը վերահասցեագրվել է այլ մարմին: ՀՀ ոստիկանության կողմից մերժվել է տեղեկատվություն ստանալու վերաբերյալ միայն մեկ հարցման:

Ինչ վերաբերվում է Ձեր վերոհիշյալ գրության 3-րդ և 4-րդ կետերով հիշատակված հարցադրումներին, ապա ՀՀ կառավարության 15.10.2015թ-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված պահանջները ապահովելու նպատակով արդեն իսկ նախապատրաստվել և շրջանառության մեջ է գտնվում ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծը, որի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի տրամադրել նշված կետերով հայցվող տեղեկատվությունը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ***Մ.ՀԱԿՈԲՅԱՆ***

Կատ. Գ.Պետրոսյան
Հեռ. 010-59-66-16